



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

<< 1 >> ապրիլի 2015թ.

N 54/Ա

ք.Ստեփանակերտ

ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՈՐԴ  
ՏԱՐԻՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ ԴԻՊԼՈՍ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ  
ԱՍՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՅՄԱՆ  
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ԼՂՀ կառավարության 2011թ. մարտի 22-ի N 147-Ն որոշմամբ հաստատված <<Ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման>> կարգի 3-րդ կետը՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել <<Ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման և անցկացման>> ընթացակարգը՝ համաձայն Հավելված 1-ի:

2. Ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների (ներառյալ 2015/2016 ուստարվա) հավատարմագրված մասնագիտության կրթական ծրագրի պետական նմուշի դիպլոմ ստանալու համար փաստաթղթերի ընդունումը կազմակերպել տվյալ տարվա ապրիլի 1-ից մինչև ապրիլի 30-ը:

3. Ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների հավատարմագրված մասնագիտության կրթական ծրագրի դիպլոմ ստանալու համար ամփոփիչ ատեստավորման քննությունները (ավարտական աշխատանքների պաշտպանությունը) կազմակերպել տվյալ տարվա համար ԼՂՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատված պետական կամ հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում, այդ հաստատություններում ամփոփիչ ատեստավորման համար նախատեսվող ժամանակահատվածում:

4. Ստեղծել ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների հավատարմագրված մասնագիտության կրթական ծրագրի պետական նմուշի դիպլոմ ստանալու համար տվյալ տարվա քննությունների կազմակերպման և անցկացման ընդունող հանձնաժողով (ՔԿԱԸՀ)՝ համաձայն Հավելված 2-ի, և ՔԿԱԸՀ-ի քարտուղարություն՝ համաձայն Հավելված 3-ի:

5. Հաստատել շրջանավարտների դիմում-հայտի ձևը՝ համաձայն Հավելված 4-ի:

6. Քննությունների կազմակերպման և անցկացման ընդունող հանձնաժողովին (նախագահ՝ Ռ.Մուսայելյան)՝


ա) մինչև տվյալ տարվա ապրիլի 20-ը՝ ԼՂՀ կրթության և գիտության նախարարի հաստատմանը ներկայացնել ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների հավատարմագրված մասնագիտության կրթական ծրագրի պետական նմուշի դիպլոմ ստանալու համար ամփոփիչ ատեստավորման քննություններ կազմակերպող տվյալ տարվա պետական կամ հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանկը,

բ) մինչև տվյալ տարվա մայիսի 5-ը՝ ԼՂՀ կրթության և գիտության նախարարի հաստատմանը ներկայացնել ըստ բուհերի մասնագիտությունների և քննական առարկաների, ամփոփիչ ատեստավորման քննությունների անցկացման տվյալ տարվա ժամանակացույցը:

7. ԼՂՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ընդհանուր բաժնին՝ ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների փաստաթղթերի ընդունելության տվյալ տարվա հայտարարությունը տեղադրել նախարարության կայք-էջում և հրապարակել զանգվածային լրատվության միջոցներով:

8. Սույն հրամանի 6-րդ կետի ա) ենթակետի համապատասխան հաստատված ցանկի բուհերի ռեկտորներին՝ անհրաժեշտ պայմաններ ապահովել սույն հրամանի իրականացման համար:

9. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ԼՂՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Ա.Սարգսյանին:



Ս. ԱՍՐՅԱՆ

**ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՈՐԴ  
ՏԱՐԻՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ ԴԻՊԼՈՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ  
ԱՍՓՈՓԻՉ ԱՏԵՍԱԿՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. Սույն ընթացակարգը մշակվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թ. մարտի 22-ի N147-Ն որոշմամբ հաստատված «Ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման» կարգի պահանջների իրականացման համար:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրամանով ստեղծվում է ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների (ներառյալ 2015/2016 ուստարվա) շրջանավարտների (այսուհետ՝ շրջանավարտ) տվյալ տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման և անցկացման ընդունող հանձնաժողով (այսուհետև՝ ՔԿԱԸՀ):

3. Ամփոփիչ ատեստավորման քննություններին մասնակցելու համար դիմորդի փաստաթղթերն ընդունվում են տվյալ տարվա ապրիլի 1-ից մինչև ապրիլի 30-ը ընկած ժամանակահատվածում՝

ա) բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական ծրագրերով շրջանավարտի դեպքում՝ 2015, 2016 և 2017 թթ.-ին,

բ) մագիստրոսի կրթական ծրագրով շրջանավարտի դեպքում՝ 2015 և 2016 թթ.-ին:

Դիմորդը լրացնում է դիմում-հայտ (վերջինս նշված ժամկետի ավարտից հետո փոփոխման ենթակա չէ)՝ դրա հետ ներկայացնելով՝

ա) ավարտական փաստաթղթի (դիպլոմի) բնօրինակը՝ պատճենի հետ միասին,

բ) ներդիրի (միջուկի) բնօրինակը՝ պատճենի հետ միասին,

գ) անձը հաստատող փաստաթղթի (անձնագիր, նույնականացման քարտ, զինգրքույկ, փախստականի վկայական, կացության վկայական) բնօրինակը՝ պատճենի հետ միասին,

դ) 2 լուսանկար (3X4 սմ չափսի):

Դիմում-հայտը լրացվում և պահանջվող փաստաթղթերը ներկայացվում է դիմորդի

կողմից անձամբ կամ նրա լիազորված անձի կողմից:

4.ՔԿԱԸՀ քարտուղարության կողմից ստուգվում է դիմում-հայտի լրացման ճշտությունը, այն վավերացվում և ստացական է տրվում ընդունված փաստաթղթերի վերաբերյալ, որի մասին շրջանավարտը ստորագրում է գրանցման մատյանում:

Քարտուղարության կողմից յուրաքանչյուր օրվա ավարտից հետո ՔԿԱԸՀ-ի նախագահին տրամադրվում է տեղեկատվություն՝ դիմում-հայտ ներկայացրած շրջանավարտների տվյալների վերաբերյալ: Շրջանավարտի կողմից ներկայացված փաստաթղթերում հնարավոր ոչ ճիշտ տվյալների առկայության և շրջանավարտի ուսանելու տարիներին ավարտած բուհի համապատասխան մասնագիտության գծով կրթական գործունեության լիցենզիա չունենալու դեպքերում տվյալ շրջանավարտի փաստաթղթերը ներկայացվում են ՔԿԱԸՀ՝ լրացուցիչ ուսումնասիրության և համապատասխան որոշման կայացման համար:

5.ՔԿԱԸՀ-ի քարտուղարությունը դիմում-հայտն ընդունելուց հետո՝ մայիսի 1-ից մինչև մայիսի 5-ը ընկած ժամանակահատվածում, շրջանավարտներին տալիս է քննական թերթ՝ հաստատված ՔԿԱԸՀ-ի քարտուղարի կողմից, որտեղ նշված են ամփոփիչ ատեստավորման քննությունները, դրանց հանձնման օրը, բուհը և ժամը: Քննական թերթը ստանալու համար շրջանավարտը ներկայանում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիրը և ստացականը, որի համար շրջանավարտը ստորագրում է գրանցման մատյանում:

6.Դիմում-հայտերի ընդունման ժամկետի ավարտից հետո, ՔԿԱԸՀ քարտուղարը ստորագրում է հայտերի բազայի մասին տեղեկանք, որտեղ նշվում է դիմում-հայտերի քանակը, ամփոփիչ ատեստավորման քննությունների ընդհանուր թիվը: Տեղեկանքը ներկայացվում է ՔԿԱԸՀ-ին:

7.ՔԿԱԸՀ-ն մինչև տվյալ տարվա մայիսի 5-ը հաստատում է քննատախտակ՝ յուրաքանչյուր շրջանավարտի ամփոփիչ ատեստավորման քննություններին համապատասխան՝ համաձայն քննությունն անցկացնող բուհի տվյալ տարվա համապատասխան մասնագիտության գործող ուսումնական պլանի, և ամփոփիչ ատեստավորման քննություններ հանձնող շրջանավարտների տվյալների բազան (քննությունների բաշխում ըստ մասնագիտական առարկաների, շրջանավարտների ավարտման տարիների և բուհերի):

Մագիստրոսի կրթական ծրագրով շրջանավարտների ավարտական թեզի պաշտպանության ժամկետը և քննատախտակը, ընդունող հանձնաժողովի առաջարկությամբ, հաստատվում է Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրամանով: Մագիստրոսական թեզի պաշտպանությունն իրականացվում է հաջորդ ուսումնական տարում,

իսկ տվյալ տարվա դիմորդը համապատասխան բուհի (դեկավարի) հետ համատեղ քննարկում ու ընտրում է մագիստրոսական թեզի թեման համապատասխան մասնագիտության գործող ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:

8. Ամփոփիչ ատեստավորման քննական հանձնաժողովները (յուրաքանչյուր մասնագիտության գծով մեկ հանձնաժողով) յուրաքանչյուր տարի կազմվում են ըստ կրթական ծրագրերի և մասնագիտությունների, միայն տվյալ ուստարվա համար նախատեսված քննությունների ժամկետների համար:

9. Ամփոփիչ ատեստավորման քննությունները կազմակերպվում են պետական կամ հավատարմագրված ոչ պետական բուհերում: Տվյալ բուհի ռեկտորը պատասխանատու է բուհում անցկացվող ամփոփիչ ատեստավորման քննության կազմակերպման և անցկացման պայմանների ապահովման համար: Ամփոփիչ ատեստավորման քննությունը սկսելու օրվանից առնվազն երկու շաբաթ առաջ քննություն անցկացնող բուհը հրապարակում է քննական հարցաշարերը՝ նախարարության սահմանած մասնագիտական-առարկայական ծրագրերին համապատասխան:

10. Քննություններից մեկ օր առաջ ՔԿԱԸՀ քարտուղարը՝ ՔԿԱԸՀ նախագահի կողմից ըստ առարկաների քննություն հանձնող շրջանավարտների հաստատված ցուցակը հանձնում է ամփոփիչ ատեստավորման քննական հանձնաժողովի նախագահին: Հանձնաժողովի նախագահը և ԼՂՀ կրթության և գիտության նախարարության լիազոր ներկայացուցիչը, նախքան շրջանավարտների քննասենյակ մուտքը, ստուգում են անձը հաստատող փաստաթղթի և քննական թերթիկի համապատասխանությունը:

11. Ամփոփիչ ատեստավորման քննություններն անց են կացվում բանավոր (համապատասխան հարցման թերթում շրջանավարտը պարտադիր գրի է առնում իր պատասխանները):

12. Ամփոփիչ ատեստավորման քննությունները գնահատվում են հինգ բալային գնահատման համակարգով՝ «անբավարար», «բավարար», «լավ» և «գերազանց»: Ամփոփիչ ատեստավորման քննությունից «անբավարար» գնահատական ստանալը շրջանավարտին չի զրկում մյուս ամփոփիչ ատեստավորման քննությունները հանձնելու իրավունքից:

13. Ամփոփիչ ատեստավորման քննությունների վերահանձնում կազմակերպվում է մինչև 2016/2017 ուստարվա ավարտն ու միայն այն առարկաներից, որոնցից նախորդ քննաշրջանում ստացվել են «անբավարար» գնահատական: Տվյալ տարվա ամփոփիչ ատեստավորման քննություններին մասնակցած և քննական առարկայից «անբավարար» գնահատական ստացած շրջանավարտների համար, հաջորդ ուսումնական տարվա ամփոփիչ

ատեստավորման քննություններին շրջանավարտի մասնակցության դեպքում, պահպանվում է ամփոփիչ ատեստավորման նախորդ տարվա համապատասխան մասնագիտության գծով նախատեսված քննական մյուս առարկայից ստացած <<դրական>> գնահատականը:

14. Քննական գնահատականների գրանցումը կատարվում է քննություն անցկացնող բուհի նախապես համարակալված և կնքված մատյաններում: Կազմվում է նաև ամփոփիչ ատեստավորման քննությունների արձանագրություն, որի մեջ նշվում են ամփոփիչ ատեստավորման քննությունների գնահատականները, տրված հարցերը, հատուկ կարծիքները և այլն: Տվյալ օրվա համապատասխան քննական առարկայի քննական տեղեկագր/եր/ի մեկ օրինակը նախարարության լիազոր ներկայացուցիչը քննությունների ավարտից անմիջապես հետո ներկայացնում է ՔԿԱԸՀ-ի նախագահին կամ քարտուղարին: Արձանագրությունները և քննական տեղեկագրերը ստորագրում են ամփոփիչ ատեստավորման քննական հանձնաժողովի նախագահը և անդամները, ԼՂՀ կրթության և գիտության նախարարության լիազոր ներկայացուցիչը:

15. Ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքները բողոքարկման ենթակա չեն:

16. Ամփոփիչ ատեստավորման քննությունների ընթացքի վերահսկողությունն իրականացվում է ԼՂՀ կրթության և գիտության նախարարության լիազոր ներկայացուցիչների կողմից:

17. Պետական նմուշի դիպլոմների հատկացման համար ՔԿԱԸՀ-ն ԼՂՀ կրթության և գիտության նախարարին է ներկայացնում հաշվետվություն, որտեղ նշվում են տվյալ բուհի շրջանավարտների անուն-ազգանունները՝ կից ներկայացնելով քննական տեղեկագրերը: Ամփոփիչ ատեստավորման քննական հանձնաժողովների որոշումները (ՔԿԱԸՀ ներկայացրած ցուցակների համաձայն) շրջանավարտին պետական նմուշի դիպլոմ շնորհելու մասին հաստատվում է ԼՂՀ կրթության և գիտության նախարարի հրամանով:

18. Շրջանավարտներին պետական նմուշի դիպլոմ հանձնվում է ԼՂՀ կրթության և գիտության նախարարի համապատասխան հրամանի հիման վրա:

19. Ամփոփիչ ատեստավորման քննությունները դրական գնահատականներով հանձնած շրջանավարտներին պետական նմուշի դիպլոմ և ներդիր (պահպանելով նախկին դիպլոմի ներդիրի ընթացիկ գնահատականները) տրվում են՝

ա) տվյալ մասնագիտության կրթական ծրագրով հավատարմագիր ունեցող բուհերի դեպքում՝ իրենց նախկին բուհի կողմից, համապատասխան մասնագիտության քննական հանձնաժողովի նախագահի և տվյալ բուհի ռեկտորի ստորագրությամբ՝ վավերացված բուհի՝ պետական զինանշանի կնիքով.

բ) տվյալ մասնագիտության կրթական ծրագրով չհավատարմագրված բուհերի (կամ բուհի գործունեությունը դադարեցված կամ հավատարմագիրը ուժը կորցրած ճանաչված կամ տվյալ մասնագիտության գծով կրթական գործունեության լիցենզիան կասեցված) դեպքում՝ քննությունները կազմակերպած բուհի կողմից, համապատասխան մասնագիտության քննական հանձնաժողովի նախագահի և քննությունն անցկացրած բուհի ռեկտորի ստորագրությամբ՝ վավերացված այդ բուհի՝ պետական զինանշանի կնիքով:

**Քննությունների կազմակերպման և անցկացման  
ընդունող հանձնաժողով (ՔԿԱԸՀ)**

1. **Ռ.Մուսայեյան** – ԼՂՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչության պետ, հանձնաժողովի նախագահ
2. **Մ.Հայրիյան** - ԼՂՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչության մասնագիտական կրթության և գիտության բաժնի պետի պաշտոնակատար, հանձնաժողովի քարտուղար
3. **Գ.Սահակյան** – Արցախի պետական համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր
4. **Զ.Կարապետյան** -Ստեփանակերտի <<Գրիգոր Նարեկացի>> համալսարանի ուսումնական մասի վարիչ
5. **Ա.Վարդանյան** - Ստեփանակերտի <<Մեսրոպ Մաշտոց>> համալսարանի պրոռեկտոր




**Քննությունների կազմակերպման և անցկացման  
ընդունող հանձնաժողովի քարտուղարություն**

1. Մ.Հայրիյան - ԼՂՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչության մասնագիտական կրթության և գիտության բաժնի պետի պաշտոնակատար, հանձնաժողովի քարտուղար
2. Դ.Սարգսյան - ԼՂՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչության մասնագիտական կրթության և գիտության բաժնի գլխավոր մասնագետ
3. Բ.Հակոբյան - ԼՂՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչության մասնագիտական կրթության և գիտության բաժնի առաջատար մասնագետ

**1** Անձնական համար

--	--	--	--	--	--	--	--	--	--



**2** Անձնագիր

սերիա	համար								

**3**

Ազգանուն \_\_\_\_\_

Անուն \_\_\_\_\_

Հայրանուն \_\_\_\_\_

**4** Բնակության հասցեն

շրջան \_\_\_\_\_

քաղաք/գյուղ \_\_\_\_\_

փողոց \_\_\_\_\_

տուն/շենք \_\_\_\_\_ բն. \_\_\_\_\_ հեռախոս \_\_\_\_\_

**5** Քաղաքացիությունը

ԼՂՀ   
  ՀՀ   
  Այլ

**6** Կրթությունը

(բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը և հասցեն (քաղաք, գյուղ, մարզ) \_\_\_\_\_

(կրթական ծրագիրը, մասնագիտությունը, ավարտական փաստաթղթի անվանումը) \_\_\_\_\_

սերիա \_\_\_\_\_ N \_\_\_\_\_ ավարտելու տարեթիվը \_\_\_\_\_ թ.

**7** Հանձնել են ավարտական քննություններ /դիպլոմային աշխատանք/ ավարտած բուհում՝ հետևյալ առարկաներից

ԱՌԱՐԿԱ	ՔՆՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ /գրավոր, բանավոր/	ԳՆԱՀԱՏԱԿԱՆ
1		
2		

Դիմող՝ \_\_\_\_\_ ստորագրություն \_\_\_\_\_ ազգանուն, անուն

ՔԿԱԸՀ Քարտուղարության անդամ՝ \_\_\_\_\_ ստորագրություն \_\_\_\_\_ ազգանուն, անուն

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2015թ. Կ.Տ

**Ս Ս Ա Ց Ա Կ Ա Ն**

Դիմող՝ \_\_\_\_\_ ազգանուն, անուն, հայրանուն

**1** Անձնական համար

--	--	--	--	--	--	--	--	--	--

Ոչ պետական բուհերի նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար 2015թ. ամփոփիչ ատեստավորման քննություններին մասնակցելու համար ներկայացրել են հետևյալ փաստաթղթերը՝

- |  |                                       |
|--|---------------------------------------|
| 1. Դիմում                              | 4. Անձը հաստատող փաստաթուղթ և պատճենը |
| 2. Դիպլոմի բնօրինակը և պատճենը         | 5. 2 լուսանկար (3x4 սմ չափսի)         |
| 3. Դիպլոմի միջուկի բնօրինակը և պատճենը | 6. _____                              |

Դիմող՝ \_\_\_\_\_ ստորագրություն \_\_\_\_\_ ազգանուն, անուն

Փաստաթղթերն ընդունեց՝ \_\_\_\_\_ ստորագրություն \_\_\_\_\_ ազգանուն, անուն

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2015թ.